ԽՍՀՄ ՄՔԵՐՈՒՄՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

Հաստատված է ԽՍՀՄ Մքերումների
Ժողկոմատի կողմից 1938 թ. մարտի 26-ին

# ՀՐԱՀԱՆԳ

## 1938 ԹՎԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՊԱՐՏԱԴԻՐ ԿԱՐԳՈՎ ԲՈՒՐԴ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ



ՄՔԵՐՈՒՄՆԵՐԻ ԺՈՂԿՈՄԱՏԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1938

3 | JAN 2018

ԽՍՀՄ ՄԹԵՐՈՒՄՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

*Հաստատված է ԽՍՀՄ Մթերումների Ժողկոմատի կողմից.*
*1938 թ. Մարտի 26-ին.*

# ՀՐԱՀԱՆԳ

## 1938 ԹՎԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՊԱՐՏԱԴԻՐ ԿԱՐԳՈՎ, ԲՈՒՐԴ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ.

### I. ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆ ՅԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ԿԱՐԳՈՎ ԲՈՒՐԴ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ։

1. Պետությանը պարտադիր կարգով բուրդ են հանձնում վոչխար, այծ և ուղտ ունեցող կոլտնտեսականների և մենատնտեսների տնտեսությունները։

Պետությանը պարտադիր կարգով վոչխարի այծի և ուղտի բուրդ հանձնելուց ազատվում են Յակուտական և Կարելյան ԱԽՍՀ-ների կոլտնտեսականների և մենատնտեսների տնտեսությունները։

Պետությանը պարտադիր կարգով այծի բուրդ հանձնելուց ազատվում են Դաղստանի, Կաբարդինո—Բալկարական, Չեչենո-Ինգուշական և Հյուսիսային Ոսեթական ԱԽՍՀ—ների, Կարաչայական, Չերկեսական և Ադիգեյական ինքնավար մարզերի կոլտնտեսականների և մենատնտեսների տնտեսությունները։

2. Գյուղական վայրերում ապրող և իրենց գյու-

գական տնտեսությունները չհամայնացրած արհեստագործական և ձկնորսական արտելների և հաշմանդամների կոոպերատիվ արտելների անդամները և գյուղական վայրերում ապրող բոլոր անհատ տնայնագործները պետությանը պարտադիր կարգով բուրդ հանձնելու նկատմամբ հավասարեցվում են տվյալ գյուղխորհրդի մենատնտեսների տնտեսություններին։

Գյուղական վայրերում ապրող և իրենց գյուղական տնտեսությունները համայնացրած արհեստագործական արտելների, արդյունաբերական կոլտնտեսությունների, ձկնորսական կոլտնտեսությունների և հաշմանդամների կոոպերատիվ արտելների անդամները բուրդ հանձնելու նկատմամբ հավասարեցվում են կոլտնտեսականների տնտեսություններին։

Գյուղական վայրերում ապրող և գյուղատնտեսական արտելների կանոնադրության համաձայն համայնացման յենթակա գյուղական տնտեսություն չունեցող, նաև դաշտային հողամասերում ցանքսի առաջադրանք չունեցող և գյուղատնտեսական հարկով չհարկադրվող արհեստագործական արտելների, ձկնորսական կոլտնտեսությունների և հաշմանդամների կոոպերատիվ արտելների անդամները բուրդ հանձնելու նկատմամբ նույնպես հավասարեցվում են կոլտնտեսականների տնտեսություններին։

3. Բանվորների և ծառայողների տնտեսությունները, բացի այս հրահանգի 4-րդ հոդվածի ա. կետում հիշվածներից, պետությանը պարտադիր կարգով բուրդ են հանձնում կոլտնտեսականների տնտեսությունների համար սահմանված նորմաներով, կոլտնտեսականների

ՀԱՅԿՈՍՏԱՏ ՀԱՍՍՍՌ
1-36805



տնտեսությունների համար սահմանված արտոնությունների կիրառմամբ։

4. Պետության պարտադիր կարգով բուրդ հանձնելուց ազատվում են՝

ա) Բաղաքների, բանվորական ավանների և միութենական հանրապետությունների կառավարությունների կողմից քաղաքատիպ համարված բնակավայրերի բնակիչների տնտեսությունները, յեթե այդ տնտեսությունները ցանքսի առաջադրանք չունեն և գյուղատնտեսական հարկով չեն հարկվում։

բ) Պետական մարմիններից կենսաթոշակ ստացող թոշակառուները, յեթե նրանք ցանքսի առաջադրանք չունեն և գյուղատնտեսական հարկով չեն հարկվում։

գ) Սոցապահովման և սոցապահովագրման մարմինների կողմից ինվալիդության առաջին կամ յերկրորդ կարգին դասված պատերազմի և աշխատանքի ինվալիդները, յեթե նրանց ընտանիքի կազմում տնտեսությամբ զբաղվող աշխատունակ անդամներ չկան։

դ) Մինչև 7-տարեկան հասակի յերեխաներ ունեցող Կարմիր-բանակայինների կանայք, յեթե ընտանիքում այլ աշխատունակ անդամներ չկան։

5. Պետությանը բուրդ հանձնելուց ազատվում են մեծահասակ-անաշխատունակ կոլտնտեսականների և մենատնտեսների տնտեսությունները, վորոնք տվյալ տնտեսության մեջ աշխատող ընտանիքի այլ անդամներ չունեն։

Բուրդ հանձնելուց ազատվում են նաև այն մեծահասակ տղամարդ և կին կոլտնտեսականների և մենա-

տնտեսների տնտեսությունները, վորոնց տղան գտնվում է պարտադիր զինվորական ծառայության մեջ Բ. Գ. Կ. Բ-ի կամ Կարմիր նավատորմի անձնակազմի շարքերում, իսկ ընտանիքում մնացել է նրա կինը, մինչև 7-տարեկան յերեխաներով։

Անաշխատունակ են համարվում՝

ա) 60 և ավելի տարիք ունեցող կոլտնտեսականները և մենատնտեսները, 55 և ավելի տարիք ունեցող կոլտնտեսուհիները և մենատնտեսուհիները և մինչև 16 տարեկան յերեխաները։

բ) Դաշտային և այլ աշխատանքների մասնակցել չկարողացող հաշմանդամները (կալեկները)։

գ) Սոցապահովման և սոցապահովագրման մարմինների կողմից ինվալիդության առաջին և յերկրորդ կարգին դասված պատերազմի և աշխատանքի ինվալիդները։

Մեծահասակ կոլտնտեսականների, մենատնտեսների տնտեսությունները բուրդ հանձնելուց ազատվում են շրջգործկոմների վորոշմամբ, ծխական մատյանների տվյալների հիման վրա կազմած՝ գյուղխորհուրդների ներկայացրած տնտեսությունների ցուցակներով, առանց հանձնումից ազատվելու համար տնտեսություններից վորևե հատուկ դիմումներ պահանջելու։

Մեծահասակ (ծեր) կոլտնտեսականներին և մենատնտեսներին բրդի հանձնումից ազատելու մասին այս հոդվածում նշված կարգի ճշտիվ կիրառման և հանձնումից ազատված տնտեսությունների հաշվառման պատասխանատվությունը դրվում է մթերումների ժողկոմատի շրջանային լիազորների վրա։

6. Պետությանը բուրդ հանձնելու պարտավորագրերը ստանալուց հետո բաժանված տնտեսությունները նոր պարտավորագրեր չեն ստանում, այլ մինչև բաժանումը նրանց հանձնված պարտավորությունը կատարում են միասին։

7. Պարտավորագրերը հանձնելուց հետո, բայց մինչև բրդի հանձնման առաջին ժամկետը կոլտնտեսություն մտած մենատնտեսների պարտավորագրերը վերահաշվում են կոլտնտեսականների համար սահմանված նորմաներով (բոլոր արտոնությունները կիրառելով)։ Բրդի հանձնման առաջին ժամկետից հետո կոլտնտեսություն մտած մենատնտեսների պարտավորագրերը չեն վերահաշվվում։

Պարտավորագրերը հանձնելուց հետո կոլտնտեսությունից հեռացված կամ դուրս յեկած կոլտնտեսականների տնտեսությունների պարտավորագրերը վերահաշվվում են մենատնտեսների տնտեսությունների համար սահմանված տարեկան նորմաներով։

8. Նորեկ՝ բրդի հանձնման յենթակա՝ կոլտնտեսականների և մենատնտեսների տնտեսություններին բուրդ հանձնելու պարտավորագրերը պետք է տրվեն տարեկան լրիվ նորմաներով, անկախ նրանց գալու ժամանակից, յեթե նախկին բնակավայրում նրանց պարտավորագրեր չեն տրվել։

Նորեկ տնտեսությունները, վորոնց պարտավորագրեր են տրվել իրենց նախկին բնակավայրում, պարտավոր են այդ պարտավորագրերը կատարել։

9. Կոլտնտեսականների և մենատնտեսների յուրաքանչյուր տնտեսության կողմից պետությանը հանձնելու յենթակա վոչխարի, այծի և ուղտի բրդի ամբողջ քանակությունը պետք է հաշվել՝ ա. առ 1-ը Հուն-

վարի 1938 թ. տնտեսության մեջ յեղած համապատասխան ցեղի 6-ամսական և ավելի տարիք ունեցող վոչխարների և այծերի ու 2-տարեկան և ավելի տարիք ունեցող ուղտերի քանակից և ը. տվյալ վարչական շրջանում 1937 թվին կիրառվող նորմաներով։

Տեղական իշխանության մարմիններին, նույնպես և մթերող կազմակերպություններին անպայման արգելվում է վորևե տնտեսության համար սահմանված նորմաներից ավել պետությանը բուրդ հանձնել պարտադրելը, կամ ժամկետից առաջ իրենց պարտավորությունը կատարած տնտեսություններին հանդիպական, կամ լրացուցիչ պլան տալը։

10. Բրդատու անասունների առ 1-ը Հունվարի 1938 թվից հետո քանակի պակասելը, անկախ պակասելու պատճառներից (հանձնում մսամթերումների պարտավորագրերի հաշվին, վաճառք կամ մորթ, նույնպես և կորուստ կամ անկում և այլն), տնտեսությանը չի ազատում պետությանը բուրդ հանձնելու համար նրան տրված պարտավորությունների կատարումից։

11. 1938 թ. Հունվարի 1-ից հետո կոլտնտեսությունների ապրանքային ֆերմաներից կոլտնտեսականներին ծախված վոչխարների և այծերի համար, այդ կոլտնտեսականներին լրացուցիչ պարտավորագրեր են տրվում կոլտնտեսությունների համար սահմանված նորմայով, յեթե կոլտնտեսականը վոչխարները և այծերը ստացել է մինչև առաջին (գարնան) խուզը-լրիվ տարեկան նորմայով, իսկ առաջին խուզից հետո ստացած և յերկրորդ խուզի (աշնան) յենթակա վոչխարների և այծերի համար յերկրորդ ժամկետին հանձնելիք քանակի չափով։



12. Կոլտնտեսականներն իրենց ոգտագործման համար ունեցած զտարյուն նրբաբուրդ անգլիական, ցիգայան (ռամբուլե, պրեկոս, տեղական, մերինոս, վյուրտեմբերգ ցեղի) արտադրող-խոյերից պետությանը բուրդ հանձնելուց ազատվում են, յեթե դրանք պարտավորագրերը հանձնելու ժամանակ շրջանային ցեղական անասունների ժատյաններում գրանցված են։

13. Կոլտնտեսականների անձնական ոգտագործման համար ունեցած նրբաբուրդ և կիսակոշտաբուրդ վոչխարներից բրդի հանձնումը պետք է հաշվել յելնելով նրանց ունեցած վոչխարների քանակից։

Յեթե կոլտնտեսականի տնտեսությունն անձնական ոգտագործման համար մի վոչխար ունի, պետությանը բուրդ է հանձնում կիրառվող նորմայի 1/3-ի չափով։

Տնտեսության մեջ յերկու վոչխար լինելու դեպքում, պետությանը բուրդ է հանձնվում մի գլխից։

Տնտեսության մեջ յերեք կամ չորս վոչխարներ լինելու դեպքում, բուրդ է հանձնվում յերկու գլխից։

Տնտեսության մեջ հինգ կամ վեց վոչխարներ լինելու դեպքում, բուրդ է հանձնվում յերեք գլխից։

Տնտեսության մեջ յոթ կամ ութ վոչխարներ լինելու դեպքում, բուրդ է հանձնվում չորս գլխից։

Տնտեսության մեջ ինները կամ տասը վոչխարներ լինելու դեպքում, բուրդ է հանձնվում հինգ գլխից։

Գյուղատնտեսական արտելի կանոնադրության համաձայն յերկրորդ, յերրորդ և չորրորդ խմբի շրջաններում, տնտեսության մեջ տասից ավելի վոչխար լինելու դեպքում, տասից ավելի յուրաքանչյուր վոչխա-

բից բուրդ և հանձնվում նորմայի 1/3-ի չափով։

Ծանոթություն. պարտավորություններն հաշվվում են առանձին ըստ նրբաբուրդ, կիսակոշտաբուրդ և կոշտաբուրդ վոչխարների, յուրաքանչյուր ցեղի վոչխարի համար սահմանված նորմաներով, կիրառելով սահմանված արտոնությունները նրբաբուրդ ցեղի վոչխարների համար առանձին և կիսակոշտաբուրդ վոչխարների համար առանձին։

Որինակ. Անձնական ոգտագործման համար կոլտնտեսականն ունի մի մերինոս՝ ռամբուլե ցեղի՝ վոչխար և չորս կիսակոշտաբուրդ մետիս վոչխարներ։ Տվյալ շրջանում այդ տեսակի վոչխարների համար բրդի հանձնման նորմաներն են՝ մերինոսի համար 3500 գրամ և կիսակոշտ մետիսի համար—1000 գրամ։ Հրահանգի այս հոդվածի համաձայն, կոլտնտեսականին հաշվում են մի մերինոս վոչխարի համար նորմայի մեկ յերրորդը, կամ 1167 գրամ մերինոս բուրդ և չորս կիսակոշտաբուրդ մետիս վոչխարների համար, հաշվելով իբրև յերկու վոչխար, կամ 2000 գրամ մետիս կիսակոշտ բուրդ։

14. Անասնապահական ապրանքային ֆերմաներ ունեցող կոլտնտեսությունների անդամներին պետությանը բուրդ հանձնելու հաշվին արտոնություն է տրվում, իբրև ղեղջ կոլտնտեսականների համար սահմանված նորմաներից, ֆերմայի կողմից պետությանը հանձնելիք բրդի քանակի 20 տոկոսի չափով, այդ ղեղջը հաշվելով կոլտնտեսականների անձնական պարտավորությունների կատարման հաշվին։

Ծանոթություն. Ղեղջ տրվում է ֆերմայի փաստորեն հանձնած բրդի քանակից նաև այն դեպքում, յեթե ֆերման իր պարտավորությունը լրիվ չի կատարել։ Յեթե ապրանքային ֆերման սահմանված ժամկետին իր տարեկան պարտավորությամբ բուրդը լրիվ չի հանձնել, և բուրդը ֆերման կհանձնի, կամ նրանից կգանձվի հիշյալ ժամկետից հետո, այդ դեպքում կոլտնտեսականները պետք է ոգտվեն միայն սահմանված ժամկետին ֆերմայի փաստացի հանձնած քանակի 20 տոկոսից։

15. Կոլտնտեսականներին տրվելիք ղեղջի ամբողջ քանակը վորոշելը և այդ ղեղջի գրանցումն առանձին կոլտնտեսականների պարտավորագրում՝ ըստ բրդի տեսակների՝ կատարվում է հետևյալ կարգով։

ա) Տվյալ կոլտնտեսության բոլոր կոլտնտեսականների համար տրվելիք ղեղջի ընդհանուր չափը վորոշվում է ֆերմայի հանձնած բոլոր տեսակի բրդի ընդհանուր գումարից, ըստ առանձին սահմանված հանձնման ժամկետների։ Որինակ՝ առաջին ժամկետին ֆերման հանձնել է—40 ցենտներ նուրբ բուրդ, 20 ցենտներ կիսակոշտ, 36 ցենտներ կոշտ, 3 ցենտներ ուղտի և 1 ցենտներ այծի բուրդ, ընդամենը 100 ցենտներ, հետևապես տվյալ կոլտնտեսության կոլտնտեսականներին առաջին ժամկետին հանձնած բրդի հաշվին հասանելիք ղեղջի ընդհանուր չափը կլինի 20 ցենտներ։

բ) Ղեղջի ընդհանուր քանակն առանձին կոլտնտեսականների մեջ բաժանում է կոլտնտեսության վարչությունը, վորը պարտադիր հանձնումների տեսուչներին ներկայացնում է այն կոլտնտեսականների տնտեսությունների ցուցակը (քաղվածք կոլտնտեսության վարչության նիստի արձանագրությունից), վորոնց արտո-

նութիւն է տրվում, ցուցակի մեջ նշելով յուրաքանչյուր կոլտնտեսականի տնտեսության պարտավորության կատարման հաշվին գրանցվելիք բրդի քանակը։

դ) Յուրաքանչյուր կոլտնտեսականին հասանելիք զեղջը կատարվում է կոլտնտեսականի պարտավորագրի մեջ, տվյալ ժամկետի համար գրանցված բրդի բոլոր տեսակների համար, հարաբերական չափով, ըստ վորում պարտադիր հանձնումների տեսուչը հիշյալ զեղջը գրանցում է կոլտնտեսականների անձնական հաշիվների մեջ, իսկ մթերողի ընդունման կայանը, իր ստացած՝ արտոնությունից ոգտվող կոլտնտեսականների՝ ցուցակի պատճենի հիման վրա զեղջի մասին նշումներ է կատարում կոլտնտեսականների պարտավորագրերի մեջ։

ղ) Յեթե ֆերմայի կողմից պետությանը բուրդ հանձնելու առաջին ժամկետին հանձնված բրդի 20 տոկոսն ավելի լինի կոլտնտեսականների կողմից նույն ժամկետին հանձնվելիք բրդի քանակից, այդ դեպքում զեղջի առաջին ժամկետին չ՝ոգտագործված մասը պետք է փոխանցել կոլտնտեսականների յերկրորդ ժամկետի պարտավորությունների կատարման հաշվին։

Յեթե կոլտնտեսության ֆերմայի յերկու ժամկետներին հանձնած բրդի հաշվին կոլտնտեսականներին հասանելիք զեղջը հավասար կամ ավելի լինի կոլտնտեսականների տարեկան պարտավորությունների չափից, այդ դեպքում կոլտնտեսականները բոլորովին ազատվում են իրենց տրված պարտավորությունների կատարումից։

յ) կոլտնտեսականներին տրված զեղջից կարող



են ոգտվել միայն տվյալ կոլտնտեսության անդամները և միայն տվյալ տարվա ընթացքում։

զ) Ապրանքային ֆերմաներ ունեցող կոլտնտեսությունների կոլտնտեսականները հիշյալ արտոնություններից ոգտվում են այն դեպքում, յեթե անասնապահական ֆերման գոյություն է ունեցել կամ ձևավակերպվել է համապատասխան հողային մարմինների կողմից, պարտավորագրերը հանձնելուց առաջ։

16. 1937 թվի հունվարի 1-ից հետո, ԽՍՀՄ Ժողկոմխորհի կողմից հաստատված պլանի համաձայն մի հանրապետության, յերկրամասի կամ մարզի կոլտնտեսությունից մի այլ հանրապետության, յերկրամասի կամ մարզի կոլտնտեսություն փոխադրված վերաբնակիչներին արտոնություններ են տրվում ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1937 թ. Նոյեմբերի 17-ի «Գյուղատնտեսական վերաբնակության համար տրված արտոնությունների մասին» վորոշման համաձայն (ԽՍՀՄ 1937 թ. Ն. Ժ. № 73, հոդված 352)։

## II. ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՅԵՎ ՄԵՆԱՏՆՏԵՍՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐԳՐԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ՅԵՎ ՀԱՆՁՆՄԱՆ ԿԱՐԳԸ.

17. Գյուղխորհուրդների ծախական, ստուգված, մատյանների վրա հիմնվելով, պարտադիր հանձնումների տեսուչները՝ յուրաքանչյուր գյուղխորհրդի առ 1-ը հունվարի 1938 թ. վոչխար, այծ և ուղտ ունեցող կոլտնտեսական և մենատնտես տնտեսությունների անվանական ցուցակներն են կազմում, հետևյալ խմբավորություններով.

ա) Յուրաքանչյուր առանձին կոլտնտեսության բրդի հանձնման յենթակա կոլտնտեսականների տնտեսությունների.

բ) Բրդի հանձնման յենթակա մենատնտեսների տնտեսությունների.

գ) Բրդի հանձնման յենթակա բանվորների և ծառայողների տնտեսությունների.

դ) Այս հրահանգի համաձայն բրդի հանձնումից ազատված տնտեսությունների։

Յուրաքանչյուր տնտեսության պարտադիր հանձնման չափի մասին արված նշումներով կազմված ցուցակները հաստատվում են մթերումների ժողկոմատի շրջիազորների կողմից և դրանց հիման վրա պարտադիր հանձնումների տեսուչը յուրաքանչյուր տնտեսության համար սահմանված ձևի պարտավորագրեր և լրացնում։

Բրդի հանձնման յենթակա տնտեսությունների ցուցակների յերկրորդ օրինակը տրվում է շրջանի մթերող կազմակերպությանը (Սոյուզզագոտշերստի շրջգրասենյակին, կամ շրջսպառկոոպին)։

18. Պարտադիր հանձնումների տեսուչը պարտավորագրերը հանձնում է կոլտնտեսականի, կամ մենատնտեսի տնտեսության գլխավորին, կամ նրան փոխարինողին, ստացման մասին ստորագրություն վերցնելով։ Պարտավորագրերն ընդունելուց և ստացման մասին ստորագրություն տալուց հրաժարվելու դեպքում, պարտադիր հանձնումների տեսուչը դրա մասին արձանագրություն է կազմում և այդ ներկայացնում է Մթերումների ժողկոմատի շրջիազորին, վորը պարտավոր է ստուգել պարտավորագրերն ստանալուց հրաժարվելու փաստը, դրա պատճառները և այն դեպքում, յերբ տնտեսությունը ճիշտ կերպով է բրդի հանձնման յենթարկվել, տնտեսության գլխավորին յերկրորդ անգամ առաջարկում է պարտավորագիրն ստանալ. տնտեսության գլխավորը պարտավորագիրն ստանալուց յերկրորդ անգամ հրաժարվելու դեպքում, շրջիազորն ստորագրում է արձանագրությունը և պարտավորագիրը համարվում է հանձնված։

19. Բրդի հանձնման յենթակա յուրաքանչյուր կոլտնտեսականի և մենատնտեսի տնտեսությանը պարտավորագիրը հանձնելու, նույնպես և պարտավորագիրը ճշտիվ հանձնելու ստուգման աշխատանքները պետք է վերջանան 1938 թ. Ապրիլի 1-ից վոչ ուշ։

## III. ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԲՐԴՈՎ ՀԱՐԿԱԴՐԵԼՈՒ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՐՏԱՎՈՐԱԳՐԵՐ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ.

20. Վոչխար, այծ և ուղտ ունեցող բոլոր կոլտնտեսությունները յենթակա յեն պետությանը պարտադիր կարգով բուրդ հանձնելուն։

Պետությանը պարտադիր կարգով բուրդ հանձնելու պարտավորությունից ազատվում են Ցակուտական և Կարելական ԱԽՍՀ կոլտնտեսությունները։

Պետությանը պարտադիր կարգով այծի բուրդ հանձնելուց ազատվում են Դաղստանի, Կաբարդինո-Բալկարական, Չեչենո-Ինգուշական և Հյուսիսային Օսեթական ԱԽՍՀ-ների, Կարաչայական, Չերկեսական և Ադիգեյական ինքնավար մարզերի կոլտնտեսությունները։

21. Յուրաքանչյուր կոլտնտեսության կողմից

պետությանը բուրդ հանձնելու յենթակա վոչխարի, այծի և ուղտի բրդի ամբողջ քանակությունը հաշվվում է՝ ա. առ 1-ը հունվարի 1938 թ. կոլտնտեսության մեջ յեղած համապատասխան ցեղի 6 ամսական և ավելի տարիք ունեցող վոչխարների և այծերի ու 2 տարեկան և ավելի տարիք ունեցող ուղտերի քանակից և բ. տվյալ վարչական շրջանում 1937 թվին կիրառվող նորմաներով։

Գյուղամի (գառան բրդի) հանձնման ընդհանուր չափը պետք է հաշվել կիսակոշտ չափահաս (6 ամսականից մեծ) մայր վոչխարների քանակից, այդ ցեղի վոչխարների թիվը բազմապատկելով գյուղամի համար սահմանված հանձնման նորմայով։

Յեթե 1937 թվին տվյալ կոլտնտեսության կոշտաբուրդ մայր վոչխարները մետիսացման են յենթարկվել մերինոսյան, վյուրթենբուրգյան, ցիգայան կամ անգլիական խոյերով, այդ դեպքում հիշյալ խոյերով ծածկված մայր վոչխարների քանակից հաշվվում է կիսակոշտ գյուղամի հանձնման չափը, իսկ մնացած կիսակոշտաբուրդ մայրերի քանակից հաշվում է կոշտաբուրդ գյուղամի չափը։

Յեթե տվյալ կոլտնտեսության բոլոր չափահաս մայր վոչխարներն են ծածկվել վերև հիշված արտադրող խոյերով, այդ դեպքում գյուղամի ամբողջ պարտավորությունը հաշվվում է կիսակոշտ գյուղամով։

Մերինոսյան, Վյուրթենբյուրգյան, ցիգայան, անգլիական և մետիս կիսակոշտաբուրդ մայր վոչխարներից գյուղամ չպետք է հաշվել։

22. Բրդատու անասունների առ 1-ը Հունվարի 1938 թ. քանակի հետագա պակասելը, անկախ պակասելու պատճառներից (հանձնում մսամթերումների պարտավորագրերի հաշվին, վաճառք կամ մորթ, նույնպես և կորուստ կամ անկում և այլն) տնտեսությանը չի ազատում պետությանը բուրդ հանձնելու համար նրան տրված պարտավորությունների կատարումից։

23. 1938 թ. Հունվարի 1-ից հետո խորհտնտեսություններից ստացած վոչխարների և այծերի համար կոլտնտեսություններին լրացուցիչ պարտավորագրեր է տրվում՝ կոլտնտեսությունների համար սահմանված տարեկան նորմայի համապատասխան չափով, յեթե վոչխարներն ու այծերն ստացվել են մինչև առաջին (գարնան) խուզը և հանձնման յերկրորդ ժամկետին հասանելիքի չափով, յեթե վոչխարներն ու այծերն ստացվել են առաջին խուզից հետո և յենթակա յեն յերկրորդ (աշնան) խուզին։

1938 թ. Հունվարի 1-ից հետո կոլտնտեսականներին տրված վոչխարների ու այծերի համար կոլտնտեսության պարտավորությունը պակասեցվում է բրդի այն քանակով, ինչ չափով վոր կոլտնտեսականներին լրացուցիչ պարտավորություն է տրված, համաձայն այս հրահանգի 11-րդ հոդվածի։

24. Կոլտնտեսություններն ազատվում են ազնվացեղ նրբաբուրդ (ռամբուլե, պերեկոս, տեղական մերինոս, վյուրտեմբերգ ցեղի) անգլիական և ցիգայան արտադրող խոյերից պետությանը բուրդ հանձնելուց, յեթե պարտավորագրերը հանձնելու ժամանակ այդ խոյերը գրանցված են շրջանի ցեղական անասունների մատյանում։

25. 1937 թ. Հունվարի 1-ից հետո մի հանրապետությունից, մարզից և յերկրամասից մի ուրիշը

փոխադրված վերաբնակիչ կոլտնտեսություններին, նաև վերաբնակիչներին իրենց կազմի մեջ ընդունած կոլտնտեսություններին արտոնություններ են տրվում ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1937 թ. նոյեմբերի 17-ի, «գյուղատնտեսական վերաբնակության համար տրված արտոնությունների մասին» վորոշման համաձայն (ԽՍՀՄ 1937 թ. Ո. Ժ. № 73, հոդված 352)։

26. Կոլտնտեսությունների կողմից պետությանը բուրդ հանձնելու չափը վորոշելը և նրանց պարտավորագրեր հանձնելը կատարվում է հետեվյալ կարգով։

Մթերումների ժողկոմատի շրջլիազորը հիմնվելով առ 1-ը հունվարի 1938 թ. առկա վոչխարների, այծերի և ուղտերի (ըստ ցեղի և տարիքի) քանակի մասին շրջհողբաժինների ներկայացրած և ստուգված տվյալների վրա, կազմում է կոլտնտեսությունների անվանական ցուցակները սահմանված ձևով, հաշվում է յուրաքանչյուր կոլտնտեսության բուրդ հանձնելու չափը, սահմանված ձևի պարտավորագրերը լրացնում, ստորագրում և ներկայացնում է շրջգործկոմի նախագահին ստորագրելու, վորից հետո պարտավորագրերը հանձնում է կոլտնտեսության վարչության նախագահին, կամ նրա կողմից լիազորված անձին։

Պետությանը բուրդ հանձնող կոլտնտեսությունների ցուցակների յերկրորդ որինակը տրվում է շրջանի մթերող կազմակերպությանը (Սոյուզզագոտշերստի գրասենյակին, կամ սպառկոոպին)։

27. Բուրդ հանձնելու պարտադրված յուրաքանչյուր կոլտնտեսության պատավորագիրը հանձնելու և պարտավորագրի հանձնման ճշտությունը ստուգելու աշխատանքները պետք է վերջացվեն 1938 թվի Ապրիլի 1-ից վոչ ուշ։

## IV. ՊԱՐՏԱՎՈՐԱԳՐԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԻՆ ԸՆԴՈՒՆՎՈՂ ԲՐԴԻ ՀԱՆՁՆՄԱՆ, ԸՆԴՈՒՆՄԱՆ ՅԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ.

28. Կոլտնտեսությունների, կոլտնտեսականների, մենատնտեսների և այլ տնտեսությունների կողմից պարտավորագրերով բրդի հանձնումը ԽՍՀՄ բոլոր վայրերում կատարվում է հետեվյալ ժամկետներին։

ա) Կոլտնտեսությունների և կոլտնտեսականների համար հանձնման առաջին ժամկետը սահմանվում է վոչ ուշ ոգոստոսի մեկից, իսկ յերկրորդ ժամկետը վոչ ուշ նոյեմբերի 15-ից 1938 թվի։

բ) Մենատնտեսների և այլ տնտեսությունների համար հանձնման առաջին ժամկետը սահմանվում է վոչ ուշ հուլիսի 20-ից, իսկ յերկրորդը վոչ ուշ նոյեմբերի 1-ից 1938 թ.

29. Կոլտնտեսությունները, կոլտնտեսականները և մենատնտեսները պարտավոր են իրենց համար սահմանված առաջին ժամկետին պետությանը բուրդ հանձնելու իրենց պարտավորությունները կատարել բրդի համապատասխան տեսակի տարեկան պլանի հետեվյալ տոկոսներով։

ա) Վոչխարի մերինոս, վյուրթեմբերգյան, ցիգայան և անգլիական նաև ուղտի բուրդը ԽՍՀՄ-ում ամենուրեք—100 տոկոսով։

բ) Այծի բուրդը ԽՍՀՄ-ում ամենուրեք՝ բա-

1-36859

ՀԱՅԿՈՍՅԱՅԻՆ ՍՍՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՄՄԱՐ ԱՐԽԻՎ ԴՐԱՊԱՐԱՆ

ցառությամբ Ադրբեջանական, Վրացական, և Հայկական ԽՍՀ-ների՝ 100 տոկոսով։

գ) Վոչխարի կիսակոշտ մեռիս բուրդը (աշնան և գարնան) ԽՍՀՄ-ում ամենուրեք 80%-ով։

դ) Վոչխարի կոշտ բուրդը (գարնան և աշնան) տոկոսներով՝

ՀԽՍՀ-ում՝ Կոլտնտեսությունները 60 տոկոս.
Կոլտնտեսականները 70 տոկոս.
Մենատնտեսները 80 տոկոս.

Վոչխարի կիսակոշտ և կոշտ բրդի՝ մինչև պարտավորագրերի լրիվ մարումը մնացած քանակը, ինչպես նաև կոլտնտեսությունների կողմից հանձնվելիք գյուղամի, իսկ Ադրբեջանական, Վրացական և Հայկական ԽՍՀ—ներում այծի բրդի ամբողջ քանակը պետք է հանձնվի յերկրորդ ժամկետին։

Մանրաբյուն. Այն շրջաններում, վորտեղ կոշտաբուրդ վոչխարների խուզը մի անգամ է կատարվում, միախուզ բուրդը հանձնվում է համապատասխան հանրապետության Ժողկոմխորհի և մարզային, կամ յերկրային գործկոմների կողմից սահմանված՝ տվյալ շրջանների վոչխարների խուզի սեզոնին հարմարեցրած՝ մի ժամկետում։

30. Կոլտնտեսությունները, կոլտնտեսականների և մենատնտեսների տնտեսությունները պետությանը պարտադիր կարգով բուրդ հանձնելու իրենց պարտավորությունները կատարում են բրդի այն տեսակները հանձնելով, վոր գրանցված են պարտավորագրերի մեջ։ Այն դեպքում, յերբ հանձնողը հնարավորություն չունի իր պարտավորությունը կատարելու պարտավորագրի մեջ նշված տեսակի բուրդ հանձնելով,



ամեն անգամ մթերումների ժողկոմատի շրջլիազորից հատուկ թույլատվությամբ կարող է բրդի պակասորդ տեսակը փոխարինել այլ տեսակի բուրդ հանձնելով, հետևյալ փոխհարաբերությամբ.

ա) 1000 գրամ նուրբ և ցիգայան վոչխարի բրդի փոխարեն հանձնել՝

կամ 1000 » կիսակոշտ վոչխարի 1-ի և 2-րդ դասի բուրդ
» 1000 » ուղտի փափուկ բուրդ և բաշ,
» 1250 » ուղտի կոշտ բուրդ.
» 1500 » ուղտի թաղկած բուրդ.
» 1500 » կիսակոշտ վոչխարի 3-րդ և 4-րդ դասի բուրդ.
» 1500 » վոչխարի կոշտ բուրդ.
» 2200 » այծի բուրդ.

բ) 1000 » վոչխարի կիսակոշտ բրդի փոխարեն հանձնել՝

կամ 830 » վոչխարի նուրբ բուրդ.
» 830 » ուղտի փափուկ բուրդ և բաշ.
» 1000 » ուղտի կոշտ բուրդ
» 1250 » վոչխարի կոշտ բուրդ
» 1250 » ուղտի թաղկած բուրդ,
» 1850 » այծի բուրդ։

գ) 1000 » վոչխարի կոշտ բրդի փոխարեն հանձնել՝

կամ 670 » վոչխարի նուրբ բուրդ
» 670 » վոչխարի կիսակոշտ 1-ի և 2-րդ դասի բուրդ.
» 670 » ուղտի փափուկ բուրդ և բաշ.
» 800 » ուղտի կոշտ բուրդ.
» 1000 » ուղտի թաղկած բուրդ.

» 1000 » վոչխարի կիսակոշտ 3-րդ և 4-րդ դասի բուրդ.
» 1500 » այծի բուրդ.
դ) 1000 » ուղտի բրդի փոխարեն հանձնել՝
կամ 870 » վոչխարի նուրբ բուրդ.
» 870 » վոչխարի կիսակոշտ 1-ի և 2-րդ դասի բուրդ.
» 1300 » վոչխարի կիսակոշտ 3-րդ և 4-րդ դասի բուրդ.
» 1300 » վոչխարի կոշտ բուրդ
» 2000 » այծի բուրդ.
յե) 1000 » այծի բրդի փոխարեն հանձնել՝
կամ 450 » վոչխարի նուրբ բուրդ.
» 450 » վոչխարի կիսակոշտ 1-ի և 2-րդ դասի բուրդ.
» 450 » ուղտի փափուկ բուրդ և բաշ.
» 550 » ուղտի կոշտ բուրդ
» 600 » ուղտի թաղված բուրդ.
» 670 » վոչխարի կոշտ բուրդ.
» 670 » վոչխարի կիսակոշտ բուրդ 3-րդ և 4-րդ դասի բուրդ.

31. Բուրդ հանձնողներին թույլատրվում է այծի բուրդ հանձնելու իրենց պարտավորությունները մարելու կարգով, այծի բրդի փոխարեն դվթիկ (աղվամազ) հանձնել հետևյալ հաշվով—մեկ կիլոգրամ բրդի փոխարեն 150 գրամ 1-ին սանրվածքի դվթիկ, կամ 200 գրամ 2-րդ սանրվածքի դվթիկ, կամ 250 գրամ ջիբաժի դվթիկ։

32. Կոշտ բրդի հանձնման նորման սահմանված է կեղտոտ (չլվացված) դրությամբ բրդի համար, ըստ



վորում հանձնված կեղտոտ (չլվացված) կոշտ բրդի մեկ կիլոգրամը հաշվվում է պարտավորագրի մեկ կիլոգրամի հաշվին։ Այն դեպքում, երբ կոշտ բուրդը հանձնվում է լվացված (ջրից անցկացված), կամ կիսալվա դրությամբ, կամ գյուղացիական լվացքով, անհրաժեշտ է ղեկավարվել ներքոհիշյալ նորմաներով.

| Հանրապետություններ | Բրդի տեսակը | Լվացված և կիսալվա բուրդ կեղտոտ բրդի վերահաշվարկելու նորմաները տոկոսներով | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Գարնան | | աշնան | | գյուղամ | |
| | | քաղվածքի | կիսալվա | քաղվածքի | կիսալվա | քաղվածքի | կիսալվա |
| Վրացական, Հայկական և Ադրբեջանական ԽՍՀ-ներում*) | Բողախ, մաղեխ, լեզգինկա, թուշի, զոնմա, բալբաս. | 130 | 120 | 130 | 120 | 130 | 120 |

Գյուղացիական լվացված բրդի վերահաշվարկը կեղտոտ (չլվացված) բրդի, ամենուրեք 120 % է։

Այս հրահանգում չնախատեսված հանրապետությունների, մարզերի և յերկրամասերի համար վերահաշվարկման նորմաները սահմանում է Մթերումների ժողկոմատը, իր համապատասխան լիազորների առաջադրանքով։

33. Կիսակոշտ մետիս բրդի հանձնման նորմաները սահմանված են կեղտոտ (չլվացված) բրդի հա-

*) Մյուս հանրապետությունների, մարզերի և յերկրամասերի վերահաշվարկման նորմաները հայերեն թարգմանության մեջ չեն հիշվում։

մար, պայմանով, վոր գարնան կեղտոտ գեղմից բրդի մաքուր յելույթը լինի 1-ի նդասի համար 38%, 2-րդ դասի համար—43%, 3-րդ դասի համար—50%, 4-րդ դասի համար 55%, իսկ ցած տեսակների (փորի տակի, պոչի և վոտների բրդի) համար 30%։ Բրդի մաքուր յելույթի հիշյալ տոկոսները բարձրանալու դեպքում, պարտավորագրերում նշված կեղտոտ մետիս բրդի հանձնման քանակը համապատասխան չափով պակասեցվում է, իսկ յելույթի հիշյալ տոկոսները իջնելու դեպքում, հանձնման քանակը համապատասխան չափով ավելացվում է։

Աշնան խուզի բուրդը, գյուղամը և մետիսի կտորտանքը, վորոնք մթերման ստանդարտով տալիս են 3-րդ և 4-րդ դասի կիսակոշտ գարնան բուրդ, հանձնվում են պարտավորագրերի մեջ գրանցված կիսակոշտ մետիս բրդի հաշվին, կիլոգրամին կիլոգրամ, սնկախ նրանից թե կեղտոտ բրդից ինչ տոկոսի մաքուր բուրդ կստացվի։

Ուրիշակ. կոլտնտեսությունը հանձնել է 1-ի դասի կիսակոշտ մետիս բուրդ—190 կիլոգրամ, 38%-ի յելույթի հաշվով և 3-րդ- դասի 200-կիլոգրամ, 50% մաքուր բրդի յելույթի հաշվով։ Ընդունման կայանը մաքուր բրդի փաստացի յելույթի տոկոսը հաշվել է՝ 1-ի դասի բրդի համար—42% և 3-րդ դասի բրդի համար 52%։ Տվյալ դեպքում հանձնման համար բերված բուրդը պետք հաշվել հետեվյալ քանակի—

1-ի դասի բուրդը $\frac{190 \times 42}{38} = 210$ կիլոգրամ,

3-րդ » » $\frac{200 \times 52}{50} = 208$ կիլոգրամ,



Այսպիսով հանձնման համար բերված 390 կիլոգրամ բուրդը՝ մաքուր յելույթի բարձր տոկոսի հետևանքով՝ ընդունվում է իբրև 418 կիլոգրամ։

34 Մերինոս, Վյուրթեմբերգ, ցիգայան և անգլիական կիսակոշտ բրդի հանձնման նորման սահմանվում է կեղտոտ (չ՝լվացված) բրդի համար, պայմանով, վոր կեղտոտ բրդից մաքուր բրդի յելույթը լինի հետեվյալ տոկոսներով, մերինոսյան ռամբուլեյից-33%, մերինոսյան պրեկոսից և վյուրթեմբերգյանից-35%, տեղական մերինոսից-31%, ցիգայանից և անգլյականից-40%։ Մաքուր բրդի հիշյալ տոկոսներն ավելանալու դեպքում համապատասխան չափով պակսում է կեղտոտ բրդի հանձնման յենթակա քանակը, իսկ մաքուր բրդի յելույթի այդ տոկոսները պակասելու դեպքում, կեղտոտ բրդի հանձնման յենթակա քանակն ավելանում է։

35. Հանձնվելիք բուրդը պետք է լավ վորակի լինի, բորբոսնած, այրված, ցեցը տված, գործածության մեջ յեղած, արհեստական ձևով կեղտոտված, թրջված, սատկած վոչխարներից խուզված, նույնպես և քաշի 15 տոկոսից ավելի կոռթուկով (խոզուկով) աղտոտված բուրդը չի ընդունվում։

Ծանոթություն. Կոռթուկով մինչև 15 տոկոս աղտոտված բրդի քաշից ընդունելու ժամանակ համապատասխան զեղջ է արվում և ի հաշիվ պարտավորության հաշվվում է զեղջը պակսեցնելուց հետո ստացված քաշը։ Կոռթուկով աղպոտված բուրդն ընդունելիս անպայման պետք է առանձնացնել նորմալ բրդից։

Պետպարտավորության կարգով բուրդ հանձնելիս չի թույլատրվում՝

ա) նուրբ և կիսակոշտ բրդի մեջ կոշտ բուրդ խառնելը.

բ) բնական բրդին գործարանային, թափվող (լինկա) և այլն տեսակի բուրդ խառնելը.

գ) մի տեսակի բրդին այլ տեսակ բուրդ խառնելը։

36. Գարնան բուրդը հանձնվում է գեղմերով, բացառությամբ հյուսիսային կարճապոչ վոչխարների բրդի։

Գարնան կոշտ բրդի, նույնպես և գարնան մետիսի 3-րդ և 4-րդ դասի բրդի հանձնված պարտիաների մեջ կտորտանքի քանակը ընդունված բրդի քաշի 7 տոկոսից ավել չպետք է լինի։

Մերինոսի և մետիսի 1-ին և 2-րդ դասի բրդի հանձնված պարտյաների մեջ ցած վորակի բրդի (պոչի, փորի տակի, վոտքերի բրդի և կնճիկի), քանակը ընդունված բրդի քաշի 10 տոկոսից ավելի չպետք է լինի։

37. Նուրբ կիսակոշտ, կոշտ լվացված, կիսալվա և գյուղական լվացքի, նույնպես նաև կոոթուկով աղալոտված բրդի հանձնման ժամանակ, ինչպես նաև այծի մազի փոխարեն դվթիկ հանձնելու դեպքում, ընդունման կայանը՝ ընդունման անդորրագրերի մեջ գրանցում է՝ ինչպես հանձնված բրդի փաստացի քանակը, նույնպես և այն քանակը, վորն ընդունվում է ի հաշիվ պարտավորության կատարման։

38. Ի հաշիվ պարտադիր հանձնման ընդունված բրդի քանակը, ինչպես և նուրբ ու կիսակոշտ կեղտոտ բրդից ստացված մաքուր բրդի յելույթի փաստացի տոկոսը վորոշում է ընդունման կայանը։ Այն դեպքում՝



յերբ հանձնողը չի համաձայնում ընդունման կայանի վորոշմանը՝ մաքուր բրդի յելույթի տոկոսի և հանձնված բրդի վորակի նկատմամբ, հարցը վերջնականապես լուծում է վորակի պետտեսչության տեսուչը։

39. Բուրդը, ի հաշիվ պետպարտավորության հաձնվում և պարտավորագրի մեջ նշված ընդունման կայանում։

Կոլտնտեսությունները բուրդը փոխադրում են ընդունման կայան իրենց սեփական միջոցներով։ Յեթե կոլտնտեսությունն ընդունման կայանից 10—կիլոմետրից ավելի հեռու յի գտնվում, կոլտնտեսությանը վճարվում է բրդի փոխադրության վարձը, հանրապետության ժողկոմխորհի, կամ յերկրային (մարզային Գործկոմի կողմից հաստատված տոնն-կիլոմետրի նորմաներով, կոլտնտեսության կենտրոնից մինչև ընդունման կայանը յեղած փաստացի տարածության և 10 կիլոմետրի տարբերության հաշվով։

Հանձնված բրդի հաշվարկը (արժեքի վճարումը) կատարվում է սահմանված պետական մթերումների գներով, բուրդն ընդունելուց անմիջապես հետո։

## V. ՀԱՇՎԱՌՈՒՄ ՅԵՎ ՊԱՐՏԱՎՈՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿՈՆՏՐՈԼ

40. Յուրաքանչյուր կոլտնտեսության, կոլտնտեսականի և մենատնտեսի տնտեսության պարտավորագրերի կատարման հաշվառումը կատարում է Մթերումների ժողկոմատի շրջլիազորը, հիմնվելով ընդունման կայաններից ստացված ընդունման անդորրագրերի պատճենների վրա։

Ծանոթություն. Ընդունման կայանները պարտավոր են ընդունման անդորրագրերի պատճենները սահմանված ձևի ռեյեստրի հետ միասին հնգորյակներով, հինգորյակը լրանալու հաջորդ որը, սուրհանդակի միջոցով, կամ ապահովագրված ծրարով ուղարկել Մթերումների ժողկոմատի շրջլիազորին։

41. Ընդունման կայանը բուրդ հանձնողներին սահմանված ձևի անդորրագրեր է տալիս և համապատասխան գրանցում է անում նրանց պարտավորագրերի մեջ։

Կոլտնտեսությունների, կոլտնտեսականների և մենատնտեսների կողմից պետությանը բուրդ հանձնելու պարտավորության կատարումը հաստատող միակ անվիճելի փաստաթուղթը համարվում է ընդունման կայանի տված անդորրագիրը։

42. Կոլտնտեսությունների, կոլտնտեսականների և մենատնտեսների բրդի պետպարտավորությունների պլանների կատարման հաշվառումը կատարում են Մթերումների ժողկոմատը և շրջաններում, հանրապետություններում, մարզերում և յերկրամասերում գտնվող նրա լիազորները, հիմնվելով Սոյուզզագոտշերստի և սպառողական կոսպերացիայի համապատասխան գրասենյակների, ի հաշիվ բրդի պետպարտավորությունների ընդունված բրդի մասին ներկայացրած տեղեկությունների։

## VI. ԲՈՒՐԴ ՀԱՆՁՆՈՂՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ.

43. Բուրդ հանձնելու համար սահմանված յուրաքանչյուր ժամկետին, յերբ կոլտնտեսություններն ի-



բենց պարտավորությունները չեն կատարում, Մթերումների ժողկոմատի շրջլիազորը պարտավոր է անձամբ ստուգել պարտավորությունը չկատարելու պատճառները և սահմանված ժամկետին իրենց բուրդ հանձնելու պարտավորությունը չարամտորեն չ'կատարած կոլտնտեսությունների գործը, կոլտնտեսության վարչությանը գրավոր զգուշացում անելուց 10 որ հետո, ուղարկում է հանրապետության (մարզի, յերկրամասի) դատախազին, որը կոլտնտեսության վարչությանը դատարանի միջոցով պատասխանատվության է յենթարկում, կոլտնտեսությանը տուգանելով պարտավորության չկատարած մասի պետգնումների գներով հաշված արժեքի չափով, նույնպես և վճիռ է կայացնում պարտավորագրի չկատարված մասը բնականով գանձելու համար։

Յեթե կոլտնտեսությունը մինչև դատավարությունը մարում է ապառքը, դատական գործը կարճվում է։

Թե տուգանքը և թե ապառքը բնականով գանձելու մասին դատարանի կայացրած վճիռն ի կատար է ածվում պարտադիր հանձնումների տեսուչների միջոցով։

44. Սահմանված ժամկետներին բրդի հանձնման պարտավորությունները կոլտնտեսականների և մենատնտեսների տնտեսությունների կողմից չկատարվելու դեպքում, պարտադիր հանձնումների տեսուչը պարտավոր է ապառքատիրոջը գրավոր նախազգուշացնել, որ յեթե 10 որվա ընթացքում պարտավորությունը լրիվ չկատարվի, գործը կհանձնվի դատարան։ Նախազգուշացման մեջ հիշված ժամկետին պարտավորությունը չկատարվելու դեպքում, Մթերումների ժողկո-

մատի շրջիագորի հաստատությամբ, տեսուչը գործը հանձնում է ապառքատիրոջ բնակավայրի դատարանին՝ նրան պատասխանատվության յենթարկելու համար։

Յեթե ապառքատերը կամովին մինչև դատավարությունն իր պարտավորությունը կատարի, գործը կարճվում է։ Հակառակ դեպքում դատարանը տնտեսությանը տուգանում է դրամով, պարտավորության չկատարված մասի պետգնումների գներով հաշված արժեքի չափով և վորոշում է կայացնում պարտավորության չկատարված մասը բնականով գանձելու մասին։

Բրդի հանձնման պարտավորություններ չկատարած կոլտնտեսականների և մենատնտեսների տնտեսությունների նկատմամբ դատարանի կայացրած վճիռն ի կատար է ածում պարտադիր հանձնումների տեսուչը։

## VII. ԲՐԴԻ ՀԱՆՁՆՈՒՄՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՐՑԵՐԻ ԱՌԹԻՎ ԲՈՂՈՔԱՐԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ.

45. Բրդի սխալ հարկադրման և պարտադիր հանձնման չափը սխալ վորոշելու մասին յեղած բողոքները, բուրդ հանձնողները ներկայացնում են Մթերումների ժողկոմատի շրջիագորին, պարտավորությունները հանձնելու որից մի ամսվա ընթացքում։

Մթերումների ժողկոմատի շրջիագորների կայացրած վճիռների դեմ յեղած բողոքներն ուղղվում են Մթերումների ժողկոմատի հանրապետական (մարզային, յերկրային) լիազորներին, Մթերումների ժողկոմատի շրջիագորների վճիռները բողոքատուին հայտնելուց մի ամսվա ընթացքում։



Մթերումների ժողկոմատի հանրապետական (մարզային, յերկրային) լիազորների կայացրած վճիռները վերջնական են։

Բրդի սխալ հարկադրման և պարտադիր հանձնման չափը սխալ վորոշելու մասին յեղած բողոքները պետք է քննվեն և վճիռները բողոքատուներին հայտնվեն ստացվելուց 10 որվա ընթացքում։

---



Հայերեն թարգմ. խմբագիր՝ Մ. Սամարջյան
Թարգմանիչ՝ Գ. Սարգսյան

Պետ. Համալսարանի Հրատարակչություն
Գլավլ. լիազոր Ղ. 3699 պատ. № 35

ՀՀ Ազգային գրադարան
NL0928090

13 АВГ. 1938
413
20
1
3685